


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

Ե. ԹՈՐՈՏՅԱՆ

Նամակ կամ որ եւ է
զրու թիւն պէտք է ուղղել առ
Տնօրին ԱՐՇԱԼՈՅՍ րազրի
ԳԱԶԻՔԷ (եզիպտոս)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՉԱՄԱՐ	
Տարեկան որդ դասնիկն	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԷՐ	
Տարեկան Ֆրանկ	20
Վեցամսեայ »	12

E. TOROSSIAN
Direc.-propr. du journal arménien
ARCHALOUYCE
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՅՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՔԻԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆԻԿ
Եւ թղթատարի ծախքը
Խնդրագրութեան վրայ է :

Խնդրագրութեան ուղղուած
գրութիւնք եւ չ'են տուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ
Կանխիկ վճարելի են

ՁԱԿԱԶԻԿԷՆ ՁԱՅՆ ՄԸ

Եզրպտանական Հայոց այն փոքրամասնութիւնը, որ բնաշխարհին գործերով քիչ շատ կը չափազանց տակաւին, արդէն անցած շաբաթ «Արևելք»-ի և «Բիւզանդիոն»-ի մէջ կարգաց Հիւանդանոցին մէջ թոքախտին — չէ՛ թէ երեւումին — այլ ճարակաւեւուն և մինչև որբանոց մուտ գտած ըլլալուն սրտասարսուռ բոթը : «Բիւզանդիոն» կը գուժէր որբուհոյ մը մահն իսկ այդ անողք հիւանդութենէն :

Կարգացինք և իբր ճշմարիտ հայրենասէր՝ սփոփուելու համար մատրիֆա մ'ապսպրեցինք և մեր բոթերը կամ օսմանըն չարունակեցինք . . .

Քայց կ'երեւայ թէ կը գտնուին եղբր գաւառաբնակ այնպիսի անձեր, որոնք իւր տիպական մայրաքաղաքին լուսաւորեալներէն տարբեր խորհելու յանդգնութիւնը կ'ունենան : Ահա անոնցմէ մին է Ձակազիկի Տիար Տիգրան Հաճընլեան, զոր անձամբ ճանչնալու պատիւը չունիմ :

Այդ արժանաշարք անձը «Արշալոյս»-ի 159 թուոյն մէջ իր ամբողջութեամբ կ'արտատայէ այն տրտմաթախիժ նամակը, զոր Հիւանդանոցին Հոգաբարձութիւնը Ս. Պատրիարքին ուղղեց չարաղետ լուրը հազարեւու համար. կարգացէք այդ նամակը, և պիտի տեղեկանաք շատ մը բաներու, որոնց մանրամասնութիւնը չափազանց պիտի երկարէր ներկայ գրութիւնս :

Հոս փակագիծ մը :

Յօդուածագիրս — և թերևս ուրիշներն ալ — թէև այդպիսի նամակի ակնարկութիւններ տեսայ կ. Պոլսոյ վերոյիշեալ երկու թերթերուն մէջ, բայց պատճէնը «Արշալոյսի» մէջ կրցայ գտնել, շնորհիւ Տիար Հաճընլեանի : Պատճառ :

Ահաւասիկ. — Անոնք որ — ինչպէս ես — անկարող են բաժանորդագրուել այդ թերթերուն, ստիպուած են իրենց կարգը ըստ պատել երկու հայկական սրճարաններուն մէջ : Սպասուող չերեմն օրեր կը տեւէ, բայց և այնպէս մարդ դարձեալ ինքզինքը բազաւոր համարելու է, եթէ թերթերը իր ձեռքը հասնին գոնէ հազար ներդրութիւններով չկարգացուելու աստիճան պատառատուն չեղած, և մանաւանդ թուով անպակաս . . . Ճշմարիտ է որ ամեն մարդ միշտ անայլալ պաղարին չ'ըլլար, և երբ թերթերը կարգացած միջոցին յանկարծ յուզ-

ուի որևէ պատճառաւ մը, մէկ երկու հատը կը գրպանէ անուշադրութեամբ, մեծ ուշադրութիւն ընելով սակայն որ կարսօնը չտեսնէ . . . Եւ ահա ինչու համար ամեն մարդ ամեն թերթը չկրնար տեսնել :

Փակագիծը գոցենք և դառնանք խընդրոյն :

Արդ Տ. Հաճընլեան դարման մը մատնանիշ կ'ընէ ազատելու համար որբերն և որբուհիները, որոնք իրենց գերազանցապէս բնական հօր — ազգին տունը — կը գտնուին, ինչպէս աշկոծեալներ յանքոյթ նաւահան գիտս : Գարմանն ալ մանրամասնուած է իր գրութեան մէջ. ուստի՝ ինչպէս ամեն ազգայնոյ, և ինձ՝ շնորհաւորելով հանդերձ յօդուածագիրը՝ կը մնայ իմ գաղափարս յայտնել թէ այդ դարմանը գործնական է թէ ո՛չ :

«Ոչ»ը բացարձակապէս կը հեռացնեմ և վստահօրէն կ'ըսեմ :

— Այո՛, գործնական է առանց ամենափոքր դժուարութեան. բաւական է որ Սրբազան Առաջնորդ հայրը հաճի իր բարձր հովանաւորութիւնը նուիրել գործին :

Եւ ինչո՞ւ չնուիրէ՞ Միթէ Սրբազանը չպիտի յիշէ մեծ վարդապետին սա թօսքը, զոր կը նշանակեմ յիշուցութեան ներածին չափ : «Չեպէ՛ մ'ի է այն հայրը որ օձ տայ իր զակին, երբ սա ձուկ կուզէ» : Միթէ Սրբազանը ՄԱՀ պիտի տայ իր այն զաւակներուն, որոնք կ'ենթ կուզեն իր մէն : Նոյն իսկ Աստուած ձեռնուտ պիտի ըլլայ այս ձեռնարկին :

Գալով աշխարհական դասակարգին, աներկբայ ենք որ նա հոգով մարմնով պիտի փարի այսպիսի նուիրական գործի մը : Մեր մէջէն ո՛վ է այն անձը որ մէկ երկու ֆրանք զանայ հոգի մը մահէն — և ինչ մահ — ազատելու համար : Ո՞վ կրնայ երևակայել հայր մը մայր մը, որ իրեն քնքրուէ, թոթովախօս, հրեշտականման փոքրիկներուն սիրոյն չփոխի, աչքի առջև բերելով այդ միւս անմեղները, իրեններուն տաղեկիցները, իրենց կիսամեռ, արիւնաչաղախ ծնողաց դիւրեւեմն յայտարարեմն յափշտակուածները : Բուն իրենց զաւակները, քոյրերը, եղբայրները թող մաքով փոխադրեն այդ մահաբոյր միջոցութիւն մէջ, և օր մը, ժամ մը, վայրկեան մը հոն ձգեն, եթէ կրնան . . .

Յեղափոխական և պահպանողական, ամենքն ալ անշուշտ կը խորհին թէ ինչպիսի չէ թէ միայն 120 որբ և որբուհի ազատելու, այլ ազգին ապագան ապահովելու վրայ է : Արդարև ո՞վ կրնայ գիտնալ թէ

այդ ընտանեզուրկները սահմանուած չեն լուսաւորելու աստղեր ըլլալու հայկական խաւարամած երկինքին վրայ :

«Իրական և ճշմարիտ կարեկցութիւն մը աղէտին դարման հասցնելով միայն կ'արտայայտուի» կը գրէ Հիւանդանոցին խընդառանջ Հոգաբարձութիւնը : Ես պիտի ըսեմ — ինչ որ կ. Պոլսոյ մտասպան միջոցը լրտը Հոգաբարձութեան չէր թողնուորքը ըսել — «Իրական և ճշմարիտ հայրենասիրութիւնը հայրենեաց զաւակներուն խնայելով, անոնց գոյութեանը ապահովացող վտանգները հեռացնելով միայն կ'արտայայտուի» :

Միակ աւարկութիւնը որ պիտի ներկայանայ թերևս Սրբազանին մտքին, սա է թէ՛ կարելի՞ է սպառել 50,000 վիճակատուն Գահիրէի մէջ :

Ասոր կը պատասխանեմ . 1. Նորին Սրբազանութիւնը այդ առաջկութիւնը կ'ընէ այն պատճառաւ որ կ'անդիտէ քաղաքիս հոգեբանական վիճակը : Արդ, բացարձակապէս խաղաժողական է այն վիճակը : Իբր ապացոյց կը բաւէ յսուալ բերել Հէլվանի վիճակահաստութիւնը ի, 80,000 տամեկով ամեն տիւս : Ապագայէն և Հրէից վիճակահաստութիւնները, որոնց իւրաքանչիւրը 40,000 տուն կ'սպառէ ամսէ տիւս. ևն, ևն . 2. Մենք չենք բեր թէ միմիայն Գահիրէի ազգայնութեան պարտքն է պատասխանել Տ. Հաճընլեանի կոչին, որ անշուշտ իր արձագանգը պիտի գտնէ նաև սիրտերուն մէջ գաւառաբնակ եւ երթագործ բնակ ազգայնոց, որոնք ո՛չ նուազ ցանկացող են ազգին բարգաւաճման և զօրանալուն : 3. Երբ գործի սկսուի, այն ատեն ի բաց առեալ իրենց մարդասիրութեամբ արդէն քաջածանօթ այր և կին ազգային վրեժն անձնաւարկութիւնները, պիտի տեսնուի որ մեր այն անտարբեր կարծուած մեծատունները և ազգութիւններն կը կորսնցուցած նկատուող աստիճանաւորները պիտի հերքեն այդ անհիմն տարաձայնութիւնները, և ամենայն խանդալաւութեամբ պիտի վերցնեն տուներու ծրարները :

Փուցէ երկրորդ աւարկութիւն մ'եւս : Թերևս Սրբազանը դժկատակի շահագործել ժողովուրդին անաւել մի մուլութիւնը :

Եթէ՛ արդարև Հայաստանեայց եկեղեցին չ'ընդունիր քրիստոնեայ ուղիք եկեղեցոյ մը la fin justifie les moyens (նրպատակը միջոցները կ'արդարացնէ) կրօնական ինչպէս նաև քաղաքական սկզբունքն այն ատեն հարկ է դիմել ուրիշ միջոցներու, իբր հասոյթի աղբիւրներ :

կառավարիչը, Ոստիկանութեան նախարարը եւ ամբողջ եւրոպական բարձր դասը իրենց ներկայութեամբ փութացած էին պատուել սոյն ազգային երկօյնը...

Լօնդոնի Վակնէրեան ծանօթ օրէրան, անսպառնալից հասարակութեամբ ներկայացուցաւ օրէրանի խմբին կողմէ որու երկու տասնամյակը երգչուհիներուն եւ սուղին երգչին ծաղկեայ կողմները եւ քնար մը նուիրուեցան կարգ...

Ինչպէս արդէն կը զուշակուէր, ներկայացման զուտ հասոյթը երկը հարիւր եզրպատկան ոսկիի կը յանդի:

Աղբ. բնկերութիւնը մտադիր է նոյն գումարին մէկ մասովը պահեստի գրամագլուխ մը կազմել ընկերութեան համար, եւ ամէն տարի քան մը աւելցնել անոր վրայ՝ այս կարգի բացառիկ հասոյթներէ:

Գձուութեամբ կ'իմացնեմ նաեւ թէ տեղւոյս Թողապետութիւնը, իրեն եղած գիմուսին վրայ, իր վերջին թեր նիստին մէջ քուէներու միաձայնութեամբ, տարեկան յիսուն երկուսուսկի յատկացուց տեղւոյս Հայոց Աղբ. ընկերութեան:

Սոյն անբեկան նուէրը, միանալով ընկերութեան տարեկան ազգային երկօյնի պատկանելի հասոյթին հետ, յաջող կացութիւն մը կառնողէ-Աղբ., ընկերութեան համար որուն ապագան այլեւս ապահովուած կրնանք նկատել:

Արդարութեան պարտք մըն է խոտովանիլ թէ սոյն պատուական արգելքներուն գրելխաւորագոյն հնդկաներուն երկու հոգի են: Մին՝ Մոսկոյ Գիւլանի Ա. Ատեկոպեան Վսեմ. Կարապետ Պէյ Բէրդեան եւ միւսը երկրորդ Ատեկոպեան Տիար Չարեհ Սըվալը: Այս անգամուան թատերական ներկայացման այսքան փոյլուն յաջողութեան պատճառն ալ գործուել յիշեալ երկու պատուական ազգայիններն էին (*) իրենց ջանքերուն եւ անձանձիւր աշխատութեան համար որքան շնորհակալութիւն յայտնենք՝ քիչ է:

Եւ մասնաւ թէ մտադրային ակարամտութիւնը ամիսներով պայքար մղեց Տիար Չարեհ Սըվալը Փոյս-Ատեկոպեան ընտրուելուն դէմ ու յամառ ամբարտեթիւն մը մինչեւ իսկ իբրեւ պարզ անգամ չուզեց ընդունիլ Վսեմ. Կարապետ Պէյ Բէրդեանը:

Կը կարծէ՞ք որ ընկերութեան բարգաւաճումն ու յաջողութեանց շղթայաւորումը անմիաներուն խելքը գլուխը բերու: Ամենեւին, սակաւին նոյն խուլ պայքարը իր անգոր մտքաւանդներուն մէջ կը տապալակի, չի կրնալով յազուրդ տալ նեղ ետականութեան մը որ տգէտ ազգերու նկարագրին անբաժան մասը կը կազմէ:

«Աղբատախան» ընկերութիւնը անկանոն է» յանկերպը ծածոց մըն է բերաններն: Եթէ աս գիտողութիւնը իրոք ալ ըլլար՝ եւ պիտի մաղթէի որ մեր գործերը ամենքն ալ սասնկ «անկանոն» բարգաւաճում մը ունենային, քան թէ կարծեցեալ «կանոնաւորութեան» մը մէջ ծուրիլ ծուրիլ չարչարուէին:

X

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՊՈՒՎԱՐԻ ՏՈՒՄԸ. — Առջի շաբաթ Իտալացի մը իր հայրենակիցներէն Սթրինճէլի անուն մարդ մը սպաննեց, սճրին պատճառը կին մը եղած է, ինչպէս միշտ:

Մարդասպանը Վէնչէնցո Պէլվէտէր է, որ իր հայրենակիցներէն ճովանիի անուն մէ կուս կնոջը սիրահարն էր: Սթրինճէլիի ար-

(*) Յարգոյ յօդուածսկիւրը մտցած է իշատակել Ե. Բ. Վսեմութիւն Պողոս Փաշա նու պարի հովանաւորութիւնն, որ յիշեալ թատերական ձեռնարկին յաջողութեան ամենազբաւար պայմաններէն մին է:

Մ. Խ.

զան՝ վերջերս նամակ մը կը գրէ ճովանիի, անոր իմացնելու համար թէ՛ կ'յնը զինքը կը խաբէր:

Գժարողաբար նամակը սխալմամբ Վինչէնցոի մէկ մտերիմ լարեկամին կը տրուի, որն որ կը փութայ Վինչէնցոին հաւորդել նամակին պարունակութիւնը:

Վրիժառու Իտալացին կ'որոշէ Սթրինճէլիի հօտէն ե զուկէն վրէժը լուծել: Խեղճ հայրը լսելով Վինչէնցոին դէշ դիտաւորութիւնը կ'ուզէ խնդիրը կարգադրելով տղան ազատել. ասոր համար ժամագրութիւն մը կը խնդրէ անկէց, բայց երկու օր պարսպ տեղը կ'սպասէ:

Մարդասպանը Սթրինճէլիին աշխատած գործարանը կ'երթայ որ Պուլաքի մէջ էր, ճամբան կուս մըն է կ'ըստի մէջերնին: Երկուքն ալ կուսելով հանդերձ մինչեւ Հօտէլ-Չօհուր կը հասնին, այն ժամանակ Վինչէնցո գրպանէն դաշն մը կը հանէ եւ երեք անգամ Սթրինճէլիին կը զարնէ վզէն, կուրքէն ու փորէն, ապա կծիկը կը դնէ թուղով իր զոհը ճամբուն վրայ ոգևար վիճակի մը մէջ:

Սթրինճէլի 45 տարեկան էր, այրի մը եւ 11 զաւակ կը ձգէ որուն երեցը 22 տարեկան երիտասարդ մ'է՛ սճրին անուզողի պատճառը: Հայրը իր տղուն հիտ մինակ կը ընակէր գահիրէ, կ'յնը ե զաւակները Իտալիայ էին, խեղճ մարդուն գրպանէն նամակ մը գտնուած է իր կնոջին ուղղուած որուն մէջ խեղճ կ'յնը կը գրէ թէ նպատակ ունի եղբր քիչ օրէն եզրպատու գալ:

Խեղճ զոհը հիւանդանոց փոխադրուած միջոցին ճամբան հոգին անանգամ է: Մարդասպանը Էօզպէքիյէի մէկ թաղին մէջ ձերբակալուած է շնորհիւ գաղանի ոստիկանութեան:

ՈՐԱՍՈՒՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ. — Գանաթային (Կրեւտ) հետեւեալ նամակն ուղղուած է Գահիրէի Հայոց Որբասիրաց Ընկերութեան, զոր ի գիտութիւն ընթերցողաց կը հրատարակենք:

Գանաթայ 19/4 Մարտ 1901

Մեծ ապատիւ Առաքել Էֆէնդի Մ. Պէրպէրեան Ատենապետ Որբասիրաց Ընկերութեան Գործ. Ժողովոյ Ի Գահիրէ

Ստացայ քարտերնիկ եւ այն երկու ծրարները որ կը պարունակէին 24 օրինակ կանոնագիր Որբասիրաց ընկերութեանը:

Ձեր գրածին համեմատ, վերոյիշեալ կանոնագրերը ցրուեցի իւրաքանչիւրը 1 շինին կամ 1 ֆր. 20 սանթիմի փոխարէն. այս առթիւ բազմաքանակ Անվաւի մը Գոյր Ալիս, որ բերու համար տուաւ 5 շինին զօր կը զրկեմ կանոնագրերէն գոյացած դրամին հետ:

Յրանապահ մատափօսով կը զրկեմ եւ բնուսն եւ հինգ ֆրանք, փոխարէն 24 օրինակ կանոնագրի 28 ֆր. 80 սանթիմ. եւ Գոյր Ալիսի նուէրը 6 ֆրանք համագումար երեսուն եւ չորս ֆրանք ութսուն սանթիմ:

Նուիրատուներու անունները ներքեակեալ են, կը խնդրեմ որ Գոյր Ալիսի հինգ շինին համար ֆրանսերէն լեզուով ընկալագիր մը զըրկէք ինձ:

Ընդունեցէք յարգանքներս ԲԻԻ ԶԱՆԴ ԽԱՉԻԿԵԱՆ ՅԱՆԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՅ

Գոյր Ալիս անգլուրի ֆրանք 6. Տեարթ Ալարիս Մատանեան 2 ֆրանք 40 սանթիմ. Բիւզանդ Խաչիկեան 2 ֆր. 40 ս. Գ. Փափազեան եւ ընկ. 1 ֆր. 20 ս. Չարեհ Ալիք սանեան 1 ֆր. 20 ս. Սարգիս Աւագեան 1

ֆր. 20 ս. Թորոս Յ. Տէր Մինասեան 1 ֆր. 20 ս. Թագաւոր Ունճեան 1 ֆր. 20 ս. Յակոբ Եփրեմեան 1 ֆր. 20 ս. Պեղոս Ալիքեան 1 ֆր. 20 ս. Յովհաննէս Հաղարեան 1 ֆր. 20 ս. Սարգիս Աւագեան 1 ֆր. 20 ս. Պ. Թէքէեան 1 ֆր. 20 ս. Պետրոս Չաւուշեան 1 ֆր. 20 ս. Պողոս Մանուկեան 1 ֆր. 20 ս. Իհրան Տէօքմէճեան 1 ֆր. 20 ս. Աթանաս Պողոսեան 1 ֆր. 20 ս. Յակոբ, Նաչար եւ Ոսկան 1 ֆր. 20 ս. Մատթէոս Մանուէլեան 1 ֆր. 20 ս. Միհրան Եարամեան 1 ֆր. 20 ս. Գառար Բեռնակիր 1 ֆր. 20 ս. Համագումար 34 ֆր. 80 սանթիմ:

Հ Ե Ռ Ա Գ Ի Բ Ն Ե Ր

Պէտմֆօնիթայն 14 Մարտ. — Պօէրական 8 զօրախումբ կը շրջին Օրանտի մէջ, երկու զիւղեր Պօէր կառավարութեան մայրաքաղաք անուանուած են:

Կ. Պոլիս 14 Մարտ. — Գերմանիոյ կայսեր Սուլթանի տուած խօստան համեմատ, մեծ թուով գերմանացի սպանի կրկին մայրաքաղաք հասած են օսմանեան բանակին յրջանակները զօրացնելու համար: Արդէն յայտնի է թէ օսմանեան բանակը մեծ թուով գերմանացի սպաներ կը պարունակէ իր մէջը:

Մեծ քանակութեամբ ուղեւորները զրկուած է Մակեդոնիոյ զինուորական մթերանոցներուն համար:

ՓԱՅԱՅԻՆ ԴԵՂԱՀԱՏՆԵՐԸ

Բարեկենդանին պատահած տուտներէն մին է. տուտ մը որուն սակայն քիչ մըն ալ զընարթութիւն կը խառնուի: Գիւցացիը ծերուկ մըն է, որ վայրկեան մը հաւատացած է թէ կրնար յախտեանակա երիտասարդութիւն մը վերստանալ: Խեղճ խառնած մարդը Ֆրանսուս Բ... կը կոչուի եւ 60 ի մօտ Պաթենտոյի հաստու մըն է, որ երկար ժամանակէ ի վեր հըրժարած էր այն անանձնաշնորհմաններէն, որոցում կը պարծենար ժամանակաւ ծօն ժուան:

Փետր. 20 ին իրկուսը, մեր ծերուկը քըլիշի ծառուղիին վրայ պատելով, անցնող դարցող դիմակաւոր ամբոխը եւ զօնֆէրիներուն պատերազմը դիտելով կը զուարճանալ՝ առանց հոգ ընելու երկնքէն թափթփող ձիւնին, զորս երկնային Գօնֆէթթիի տեղ կը դնէր:

Յանկարծ Լըբիկ փողոցին մօտ մեր ծերուկը սուր աղաղակներ եւ օգնութեան կանչելու ձայներ լսեց:

Իրաւ որ բարեկենդանի դեռ ողջ է եղբր, աս Գօնֆէրիներն ալ բանի տեղ չէի դնէր կոր, սակայն երթալով անտանելի կը դառնան:

Օգնութիւն, օգնութիւն, շնորհք կը զոչէր արդարեւ երիտասարդ կին մը, որն որ ամբոխը Գօնֆէթթիի տարափի մը տակ բռնած էր եւ քիչ ժամանակէն խեղճ կ'յնը այնչափ Գօնֆէթթի կերած էր բերնին, որ ալ պօսալու կարողութիւն չէր մնացած վրան:

Սըլոր օգնութեան փութում մտածեց Պ. Բ... եւ խառնուրդին մէջ մտաւ galant մարդու մը պէս:

Եւ իրօք ալ յաջողեցաւ մանկամարդ կ'յնը հալածող զուարթ ստանակները հրնշակել, որք մայթերուն վրայէն լեպի սմ Գօնֆէթթիները փոշիով մէկտեղ կը հաւաքէին եւ խեղճ կ'յնը աչքերուն կը նետէին, լայրկեանէ մը սասնակները իրենց զոհը ձգեցին ու հետացան. այն ատեն մեր ծերուկը կրցաւ խեղճ հալածակին դիմագծերը որոշապէս տեսնալ, 20 տարեկան գեղեցիկ թուփեկ կ'յն մըն էր, որ վրան դուրսը շտկուելով զուարթօրէն մեր վաթսուսամեայ կեղտոնին առջեւ կայնեցաւ: Մերուկը իր թեւը ներկայացուց մանկամարդ կ'յնը, զորմեծ հաճոյքով ընդունեց:

Շտա ազնիւ ու կանամեծար պարոն մ'էք-

ըստ Եւայի աղջիկը, թոյլ տուէք որ ինծի բր-
րած ծառայութիւններն ազ փոխարէն խորին շը-
նորհակալութիւնս եւ երախտագիտութիւնս
յայտնեմ :

— Խնդրեմ բան մը հրամայէք — ըստ
մեր Պ. Բ. . . — երթանք սրճարանը նստինք եւ
իրարու հետ լաւ մը ծանօթանանք :

— Ես ալ ստիկէ լաւագոյն բան չեմ խնդ-
րեր պատասխանեց մանկամարդ կինը, եւ Պուլ-
վառ-սէզ-Իթալիէնի մէկ սրճարանին սեղանին
բուն մէկուն առջեւը նստան : Իրարու հետ խօ-
սակցելով մինչեւ հոտ հասած էր մեր գոյգը :

— Պատմութիւննիդ պատմեցէք, խնդրեմ,
ըստ անոր ծերուկը : Մինակնի՞դ էք փարի-
զի մէջ :

— Միս մինակս եմ, չէք կրնար գուշակել
ու բողոքի ըլլալս, եթէ գիտնաք պրավօ :

— Ո՞ր տեղէն էք որ :

— Կոստանդնուպոլսէն եմ :

— Իրա՞ն . . .

— Հապա՞, եւ երկար ատեն Փաշայի մը
Հարէմին մէջ մնացած եմ, ուրկէն վերջապէս
յաջողած եմ փախչիլ :

— Եւ ուղղակի Փարիզ եկաք :

— Այո՛, գուարճանալու համար, գուարճու-
թեան համար Փարիզ միշտ մաղինիսի պէս կը
քաշէ զիս : ասկէց զատ կը յուսայի բազմ փընու-
ռել : Երեւակայեցէք որ Փաշայէն հրաշալի գեղ
մը գողցած եմ, հրաշալի գեղ մը, որուն նմանը
չկայ բոլոր աշխարհիս մէջ : անսակ մը գեղա-
հաղ է որ յատկապէս իրեն համար չինել կու-
տար : այդ գեղահատին պորութեամբ, Փաշան՝
որ ծեր մարդ մըն էր, իր բոլոր երիտասար-
դական աւելունք կ'ստանար . . .

— Բայց իրապէս հրաշալի բան է եղեր,
պատասխանեց մեր գիւրախար մարդուկը, կրի-
տասարգութիւնը վերստանալու հետեւակարէն
խելքը գլխէն թռած :

— Հարկաւ, այս գեղահատը ուժ չունե-
ցողներուն ուժ կուտայ եւ հաճոյքի վայելուցանէ
չափազանց յոգնած ու տկարացած մարդոց աւ-
միջապէս նոր ուժ, նոր ոգեւորութիւն կուտայ :

— Արդեօք կրնայի՞ք այդ գեղահատներէն
ինծի ալ տալ :

— Ինչո՞ւ չէ, բնակարանս ասկէց քանի մը
քայլ անդին է, ինծի ընկերացե՞ք եւ ուզածնիդ
կուտամ :

Աւելորդ է ըսել թէ Պ. Բ. . . այս շահա-
ւէտ հրաւերէն հրապուրուած մէկ երկուք չ'ը-
րած, երիտասարդ կնոջը ընկերացաւ : Ինչ պար-
տիկին մէջը քանի մը գաւաթ չոտրանեա ծնկեց,
չմոռնալով նամանա անդ Փաշային հրաշալի գե-
ղահատներէն երկու հատ կ'ըլլելու :

Արդիւնքը հրաշալի եղաւ, իրաւ որ Պա-
թիւնեօցի հասառուն անդամ չ'պիտի կարենայ
պատասխանել այդ հարցման, որովհետեւ գեղա-
հատները կ'ըլլելուն անմիջական հետեւանք սա ե-
ղաւ, որ մեր Պ. Բ. . . ն խորունկ քունի մը
մէջ ինկած սկսաւ խոռթալ :

— Երեք ժամ յետոյ արթնցայ — կը յայ-
տարալէ ապա Պ. Բ. . . ն ոստիկանական գոմիսէր
Պ. Տիւրիիին, ամօթէն կապկաքմիր կտրած— ինք-
զինքս միս մինակ գտայ սենեկին չորս պատե-
րուն մէջ, դեռատի կինը զիս լքած էր :

Առաջին մտածումս եղաւ օգնութեան կան-
չիլ, դժբաղդաբար սենեակը այնպիսի պան-
դակի մը մէջ էր որուն աէրը երբէք չէր ճանչ-
նար այդ կինը : Ռէհանկոթիս գրպանները փըն-
տակեցի 300 ֆրանք պարունակող թղթապանակ
աներեւութեամբ էր : Սովորութիւն ունէի, աջ
ձեռքս թանկագին մտտանի մը կրելու, մասա-
նիս ալ յարեաւ եղած էր, միայն սեղանին վը-
րայ մատիտով գրուած երկտող մը գտայ որ սա
պէս կ'ըսէր « մատանիդ իբր յիշատակ հետս կը
տանիմ : Իրմա »

Պ. Բ. . . երգուընցած է— թէպէտեւ քիչ մը
ուշ — որ մէջ մըն ալ բարեկեանքանի իրեկունը
ամբողջին ձեռքէն աղջիկ չ'պիտի ազատէ, եւ
ամենէն աւելի երդում ըրած է անդամ մ'ալ փա-
շային գեղահատները կ'ըլլելու . . . փորձ չ'ընել :

Տպագրութիւն ԺՈՒՄԻՆԻՍԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՏՃԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍԵՔ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇԱԽՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳՆՈՒՄ 1 ՄԻԵԱՐ 563 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժ-
նէ ամենէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն
վճարած է կամ ի նպաստ իրենց գու-
մարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝
որ գրեթէ աշխարհի ուրիշ սրեւէ ըն-
կերութեանէ մէկ միլեար աւելի է :

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկա.
յացուցիչ ի Գաւիթ

ԸՆԳՋԱՆՈՒՐ ՔՆՆԵՑ ՊԱՅՈՒՐԻՈՒՄ
— ԳԷՈՐԳ ԵԿԱՌՕՑ —

Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԵՐ

Պալատի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն, Պրիսթլ Օլթէլի Եճիշդ գիմաց,
Գաթէ Տը Լա Պուրսի կից :

Հին եՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՒՈՐ ՔԱՂԱՔԵՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՄԻՆԿԷՐ ներս են եւ ասոնց մէ մինչեւ ցարբ
17, 000, 000 ծախուած է :

400 հ աւելի վկայականներով եւ մեքայնեմով վարձատրուած, երաշխատուող մեքենաներ :


ԱՄԵՆԷՆ ՄԵՐ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ
Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախիսիս մէջ ստացած է .

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ **ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԿՂՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ**
ԱՐԳՈՒՆԻՔԻՆ **ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԳՈՒՆԵԱՑ**

ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԱՅԻՎԱԿԱՆ ՏՅԱ

Կեղծերէն գգուշանալ,
ուշագրութիւն դարձել իւ-
րաքանչիւր մեքենայի վրայ
ՍԻՆԿԵՐ ի յասկանջիւն :

ԳԻՆ ՉԱՓԱՌՐ



Չրի դասեր և նորոգու-
թիւններ, ՍԻՆԿԵՐ մեքենա-
յից համար, յաճախորդաց
տուններուն մէջ :

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւն ին մեքենայից
եւ նորոգութիւն ամեն կարգի
Մեքենայից

ՄԱՆԿԱԲԱՐՉ
ՏՐԻԿԻՆ ՍՈՍԻՅԱԿ ԱՋԳԱՊԵՏԵԱՆ
Շարա-Ապսխալ-Աղիզ

Վերջերս իւր բնակութիւնը Խուրուսթիէն
փոխադրած է Շարա Ապսխալ Աղիզ, Ալի փաշա
Շէրիթի պարտիզին զիմաց, Անձեա պէյ Ապ-
տիլ Րադիի 20 թիւ սեփականութեան մէջ :

Տիկին Սօֆիկ Ազգապետեան իւր փորձա-
տութեամբ եւ յաջողակութեամբ արդէն ծանօթ
ըլլալով գանիթերնակ ազգայնոց եւ նոյն իսկ
օտարաց, աւելորդ կը համարուի զայն յանձնա-
բարել իւր խնամոցը պէտք ունեցողներուն :

Վկայեալ աղքատներուն համար ձրի
դարմանում :

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՇԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ
ՈՒՐԱՄԻ 15 ՄԱՐՏ 1901

5132	2729	2515	2811	1055	713
9473	335	3378	4101	2148	568
2049	5	408	8384	5068	1676
889	3567	3604	3832	6278	1496
	5499	1403	5537		

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ
ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ԱՐՇԱԼՈՅՍԻ՞
ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻՉԸ
Օտանկից զեղարանիկ զիւնացի փող սցիւն միջ.

Փողովրդական Տպարանին մէջ կը պատ-
րաստուին .

Այցեխարտեր, Երաշխարհականներ, Գիրքեր,
Հրատարակութիւններ, Մանագրներ, Տեղեկագիրներ,
Կանոնագիրներ, Տոմար և այլ և այլ տպա-
րանի վերաբերեալ յանձնարարութիւնները
կը վաճառուին հետեւեալ գրքերն .

1. ԲՆԱՇԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆ Ի Ա. և Բ. պրակներն :
2. ՈՐԲՈՒՆԻ ՈՐՈՅԻ ԹՈՒՐԵՐԻԱ մուտքը,
ինչպէս կը լսենք, արգիլուած է .
3. ՀԱՌԱՔԱՅՈՑ Հայոց Փողովրդական
երգերու :